

# Այց Ա. Շիրակացի դպրոց

14. 05.15



Առաջին կուրսի ուսանողները, Ռազմավարական կառավարման, Կրթության համեմատության, Կրթության հոգեբանություն առարկաների շրջանակներում, կազմակերպեցին նպատակային այց դեպի Անանիա Շիրակացի դպրոց՝ ուսումնասիրելու կրթօջախի հեռավար նպատակները, դասավանդման մեթոդների տարբերությունը, կառավարման ոճերը, ռազմավարության մշակման և որակի ապահովման մեխանիզմները, ինչպես նաև ուսուցիչների վերապատրաստման և երիտասարդ մասնագետների խթանման գործընթացների հետ:



Մեր դրված նպատակներին հասնելու համար մենք օգտագործեցինք հարցազրույցի մեթոդը, կիրառեցինք SWOT և PEST վերլուծության մեթոդները:

## “Բուհից-աշխատաշուկա 1 քայլ”

19.11.14

“Կրթության կառավարում” ամբիոնի մագիստրատուրայի առաջին կուրսի ուսանողները մասնակցեցին “Բուհից-աշխատաշուկա 1 քայլ” խորագրով կազմակերպված աշխատաժողովին, որի ընթացքում ուսանողները ծանոթացան աշխատաշուկայում առկա խնդիրներին, մասնակցեցին տարբեր սեմինարների՝ միտված գործատուների կարիքների բացահայտմանը, ստացան տեղեկատվություն թափուր աշխատատեղերի վերաբերյալ, ինչպես նաև հարցումների միջոցով անցկացրեցին ուսումնասիրություն գործատուների շրջանում՝ հետազոտության ներածություն առարկայի շրջանակում ձեռք բերած տեսական գիտելիքների գործնականորեն կիրառման միջոցով:

